«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Բարեղամյան Կարինե

Ուսումնական հաստատություն՝ Նորաշենի Ավ. Իսահակյանի անվան միջն. դպրոց ՊՈԱԿ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....2

1.Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակները 6

2.Նախաայբբենական փուլի իրականացման ուղիները 7

3.Հետազոտական աշխատանքի վերջնարդյունքի ներկայացում.....13

4.Եզրակացություն 17

5.Գրականության ցանկ.....18

6. Հավելված…… 20

Ներածություն

Նախաայբբենական շրջանը համարվում է գրաճանաչության կազմակերպման երեք փուլերից մեկը, որին անմիջապես հաջորդում են այբբենական և հետայբբենական շրջանները: Ընդ որում, գրաճանաչության ցանկացած մեթոդով աշխատելիս, անկախ հայեցակարգային դիրքորոշումներից, գրեթե առանց բացառության առանձնացվում է նախապատրաստական շրջան, որի ժամանակ լուծվում են ուսուցման այդ փուլի մանկավարժահոգեբանական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակված գրաճանաչության շրջանի բովանդակությամբ և մեթոդներով, նախադպրոցական տարիքի երեխաների տարիքային առանձնահատկություններով , կրթօջախի տեսակով և կրթության՝ այդ օղակի նպատակներով պայմանավորված որոշակի խնդիրներ:

Նախաայբբենական փուլում շատ կարևոր է առանձնացնել հետևյալ հարցը՝ ինչպե՞ս է ազդում ուսուցչի՝ նախաայբբենական շրջանին պատրաստված լինելը սովորողի ճշգրիտ և կազմակերպված ուսումնական գործունեության վրա:Նախաայբբենական փուլի ճիշտ կազմակերպման համար ուսուցիչը պետք է լինի բազմակողմանի պատրաստված, հաշվի առնի ուսումնական ժամանակի

յուրաքանչյուր վայրկյանը, դասը տանի մի քանի պլանով՝ նկատի ունենալով թե' դաստիարակչական ու կրթական աշխատանքների, թե' խաղի ու աշխատանքի նպատակահարմար զուգակցումը, գրաճանաչության ուսուցման համար երեխաներին մտավոր ու ֆիզիկական տվյալների տեսանկյունից հնարավորին լավ նախապատրաստելը:

Նախաայբբենական փուլում տարվող աշխատանքների հաջող կազմակերպման համար շատ կարևոր է դպրոց ընդունվող երեխայի նախապատրաստումը դպրոցական կյանքին ու կարգուկանոնին:

Այսպիսով, հետազոտական աշխատանքի թեման արդիական է, ինչպես մայրենի լեզվի տարրական դասընթացում նախաայբբենական փուլի գրված կարևորագույն տեղով, այնպես էլ ,այս փուլում առաջին դասարանցիների մոտ հաճախ հանդիպող , գիտելիքների և կարողությունների անբավարար ծավալով:

Ըստ այդմ, հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել մայրենիի դասաժամերի նախաայբբենական փուլում սովորողին դպրոցական ուսումնառությանը նախապատրաստելը և սովորել սովորեցնելու քայլերը: Քանզի դպրոցը, դեռևս նոր աշակերտ դարձած 6 տարեկանի համար, նոր աշխարհ է՝ լի նոր հետաքրքրություններով, նոր հույզերով ու տպավորություններով: Ուստի առաջին դասարանի դասվարն այնպես պետք է կազմակերպի իր աշխատանքը, որպեսզի երեխաների համար դպրոցական հատկապես առաջին օրերը լինեն ավելի շատ հաճելին տեսնելու և զգալու, միևնույն ժամանակ տհաճը նվազագույնի հասցնելու կամ բացարձակ չզգալու կարևոր շրջան:Այս շրջանում շատ կարևոր է նաև , որ երեխայի համար ավելի մեծ բաժին ունենա ոգևորությունը, այլ ոչ հիասթափությունը, հուսախաբությունը: Իրականում սա շատ ավելի կարևոր է ոչ միայն դպրոցական առաջին օրերի ուսումնական խնդիրներ լուծելու տեսանկյունից, այլ ուսումնառության ընթացքում առաջացող կրթադաստիարակչական խնդիրները լուծելիս:

Հետազոտական աշխատանքի նպատակային իրականացման համար պլանավորել եմ ՝ ծանոթանալ թեմայի վերաբերյալ առկա գիտամեթոդական գրականությանն ու արդի մանկավարժական փորձին՝ վեր հանելով

նախապայբբենական փուլի ընթացքում աշակերտների մոտ առկա թերությունները կամ հաջողությունները:

Կրտսեր դպրոցականների վերացական մտածողությունը, մասնավորապես ուսուցման առաջին փուլում, անբավարար է զարգացած: Հետևաբար, դասին նախապատրաստվելիս, ուսուցիչն առաջին հերթին պետք է մտածի, թե ինչ բնույթի նյութեր օգտագործի՝ լեզվական-քերականական վերացական գիտելիքները կիրառելի դարձնելու համար :Այս փուլում, իհարկե, գիտելիքների ուսումնասիրման ու որոշակի լեզվական իրողության ձևակերպման գործընթացներն իրականցվում են գիտամանկավարժական,գիտամեթոդական հատուկ սկզբունքների պահպանմամբ, առանց որոնց կրտսեր դպրոցականները ոչ միայն չեն ըմբռնի մայրենի լեզվի քերականության առանցքային հիմսադրույթները,այլև չի ձևավորվի սեր և հետաքրքրություն մայրենի լեզվի նկատմամբ:Մայրենի լեզվի քերականական գիտելիքների գործնականորեն յուրացումը, բնականաբար, իրականանում է քայլ առ քայլ՝ պարզից դեպի բարդը գնացող ընթացքով:

Հետազոտության օբյեկտը վեց տարեկաններով համալրված տարրական դպրոցի առաջին դասարանում դասավանդվող մայրենի առարկայի նախապայբբենական փուլն է՝ ուսուցման նպատակներով և իրականացման ուղիներով:

Հետազոտության առարկան առաջին դասարանում նախապայբբենական փուլում մայրենիի դասերի ուսումնասիրման ընթացքն է՝ այն դիտելով որպես աշակերտների՝ կարդալու կարողություններին նպաստող աշխատանք, պատմելու կարողությունների զարգացման և բառապաշարի հարստացման արդյունավետ գործընթաց:

Հետազոտության խնդիրներն են առաջին դասարանցիների մոտ՝

.ձևավորել ստեղծագործական, տրամաբանական-վերլուծական մտածողություն և համապատասխան ուսումնական հմտություններ,

.զարգացնել կապակցված խոսքը, պատմելու կարողությունը, հնչյունային լսողությունը՝ համապատասխան խաղերի ու գործնական առաջադրանքների կատարմամբ,

.հարստացնել բառապաշարը,

.կատարել նախապատրաստական աշխատանքներ՝ կարդալու և գրելու տարրական հմտությունների ձևավորման համար:

Համաձայն առաջադրված վարկածի՝ եթե առաջին դասարանի նախաայբբենական փուլում մայրենիի դասերի ուսումնասիրությունն իրականացվի գործնական վարժությունների, ուսոցողական խաղերի միջոցով, ապա դրանք կնպաստեն ինչպես աշակերտների հնչյունային լսողության զարգացմանը, այնպես էլ կարդալու և գրելու բարեհաջող նախապատրաստմանը: Ընդ որում, եթե դրանք կազմվեն սովորողների թե՛ակտիվ, թե՛ պասիվ բառապաշարներից ընտրված

բառերով, ապա կհարստանա նրանց ակտիվ բառապաշարը և խոսքը կդառնա առավել դիպուկ ու բովանդակային:

Այս հետազոտական աշխատանքի գիտական նորույթն այն է, որ մեկտեղվել են նախաայբբենական փուլի ուսուցման վերաբերյալ մեթոդական մոտեցումները և դրանց հիման վրա մշակվել սովորողների՝ հնչյունային լսողությունը զարգացնելուն ուղղված, բառապաշարի հարստացմանը նպաստող նկար-քարտերի, խաղվարժությունների, համակարգ:

Հետազոտական աշխատանքի ուսումնասիրության ընթացքում առաջնորդվել եմ հետևյալ մեթոդներով.

.հիմախնդրին վերաբերող գրականության ուսումնասիրություն,

.դասալսումներ և քննարկումներ,

.ամփոփիչ աշխատանք (փաստերի վերլուծություն):

Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակները

Նախայբբենական փուլում տարվող աշխատանքներն ուղղված են մեկ հիմնական նպատակի՝ երեխաներին գրաճանաչությանը նախապատրաստելուն: Այս փուլում տարվող աշխատանքների համակարգում առանձնահատուկ տեղ են գրավում ուսումնական հարցերը: Քանի որ գրաճանաչության ուսուցման համար աշակերտները պետք է որոշակի լեզվական ու աշխարհաճանաչողական գիտելիքներ ունենան, տեսականորեն ու գործնականորեն նախապատրաստվեն կարդալու և գրելու մտավոր գործողությունների կատարմանը, որոշակի կարողություններ պետք է ձեռք բերեն այդ ուղղությամբ:

Նախաայբբենական փուլի նպատակներին հասնելու ուղիները վարժությունների և առաջադրանքների միջոցով երեխաների համապատասխան հմտությունների զարգացումն է: Նմանատիպ առաջադրանքների օրինակներով հարուստ է «Այբբենարան» դասագիրքը , սակայն ուսուցիչները ևս պետք է կազմեն օրինակներ՝ իրավիճակին և դասարանի ընդհանուր մակարդակին համապատասխան , որպեսզի լիակատար լինի նախաայբբենական փուլի կազմակերպման և իրականացման արդյունավետությունը:

Լեզվական նախագիտելիքների ուսուցումը, որպես գրաճանաչության ուսուցման համար լեզվական նախադրյալների ստեղծման պայման, անհրաժեշտություն է և դրան պետք է հատուկ ուշադրություն դարձնել:

Այսպես՝ պատմության,նախադասության, բառի, վանկի, հնչյունի և այլ լեզվական հասկացությունների մասին սովորողները գաղափար պետք է կազմեն դեռևս նախաայբբենական շրջանում:

«Այբբենարան»-ում տրված թեմատիկ նկարների, բառ-նկարների, առարկայական նկարների օգնությամբ սովորողներին գաղափար ենք տալիս խոսքի կամ ամբողջական պատմության, նախադասության , բառերի մասին՝ այդ լեզվական անվանումները կապելով կոնկրետ հասկացությունների յուրացման հետ, որպեսզի դրանցից յուրաքանչյուրը որոշակի բովանդակություն ու իմաստ ստանա և դյուրին կերպով

մտապահվի: Այս շրջանում առանձնապես օգտակար են՝ նախադասությունները բառերի բաժանելու (կամ նախադասությունից բառեր առանձնացնելու), առաջադրված բառերով նախադասություններ կազմելու, ինքնուրույն կերպով նախադասություններ կազմելու և բառեր ասելու վերաբերյալ առաջադրանքների կատարումը, որոնց հիմնական նպատակն աշակերտների ակտիվ բառապաշարի ստեղծումն է և հիմնական բառաֆոնդի զարգացումը:

Նախաայբբենական փուլի իրականացման ուղիները

Նախաայբբենական փուլում լեզվական մի շարք հասկացությունների յուրացումը սովորողներին գործնականորեն նախապատրաստում է կարդալու և գրելու գործընթացին: Թերևս առաջինը և կարևորը, ինչին պետք է մեծ ուշադրություն դարձնել այս շրջանում, սովորողների խոսքն է: Այսպես, տարբեր նկարների(ինչպես այբբենարանի , այնպես էլ հատուկ պաստառների) շուրջ երեխաներն ուսուցչի հարցերի օգնությամբ պատմություններ են հյուսում, վերարտադրում են ունկնդրած փոքրիկ պատմվածքներն ու հեքիաթները: Երբ այս կարողությունները որոշակի մակարդակով ձևավորված են, կարելի է անցնել հաջորդ քայլին՝ գաղափար տալ գծապատկերի մասին: Այդ նպատակով ուսուցչուհին բացատրում է, որ պատմությունը կարելի է գրել նույնիսկ առանց տառերը ճանաչելու, այսինքն՝ գծել:Այդ նպատակով ուսուցիչը գծում է մի ուղղանկյուն և ասում.

-Պատմությունը տեղավորված է այս վանդակի մեջ: Այսինքն՝ վանդակը պատմության տնակն է: ՈՒրեմն՝ մենք ինչ պատմություն էլ որ հյուսենք, կարող ենք տեղավորել այսպիսի ( )տնակում:

Խոսքի զարգացման նպատակով անհրաժեշտ է պարբերաբար աշխատանք տանել ոչ միայն նկարների շուրջ մեկ-երկու մտքով իրար հետ կապված նախադասություններ կազմելու կարողության մշակման, այլև երեխաներին անընդհատ խոսեցնելու ուղղությամբ՝ խոսքը զուգորդելով համարժեք գործողություններով:Պիտի աստիճանաբար հասնել նրան, որ աշակերտները կարողանան գրագետ և ամբողջական խոսքով արտահայտել այն, ինչ կատարում են:

Առաջին շրջանում ուսուցիչն ինքը պիտի տա խոսքի նմուշ՝ անընդհատ խոսելով երեխաների հետ:

Թեմատիկ նկարների շուրջ պատմություն հյուսելու, ազատ, ինքնուրույն խոսք կառուցելու տարրական կարողության ձևավորումից հետո պիտի մշակել ուսուցչի հարցերի օգնությամբ նախադասությունները պատմությունից առանձնացնելու ունակություն:Այդ նպատակով ուսուցիչը դանդաղ, նախադասություն առ նախադասություն պիտի արտասանի պատմությունը՝ առաջարկելով աշակերտներին ծափերի միջոցով հաշվել, թե այն քանի մասից է կազմված:Այնուհետև ուսուցիչն աշակերտների օգնությամբ գծապատկերը բաժանում է համապատասխան թվով մասերի (օրինակ 3)՝ բացատրելով. «Եթե մեր կազմած պատմությունն ունի 3 մաս, ապա գծապատկերը ևս պետք է ունենա 3 մաս»:

Այնուհետև պետք է սովորողներին բացատրվի , որ այդ մասերից յուրաքանչյուրը պատմության մեկ մասն է և պատմության բովանդակության հետ կապված մեկ միտք է արտահայտում: Ուրեմն՝ պատմության մեջ կա 3 միտք: Ապա
միտք բառի փոխարեն երեխաները սովորում են օգտագործել նախադասություն բառը և գծել նախադասության գծապատկերը՝ :

Ցուցադրական պաստառի միջոցով կարելի է պատմության կազմի մեջ մտնող նախադասությունները ներկայացնող շերտիկները հանել՝ ակնառու դարձնելու համար նախադասություններն առանձին միավորներ են հասկացությունը:Այնուհետև երեխաներին պետք է բացատրել, որ ամեն մի առանձին, նոր սկսվող նախադասություն, պետք է սկսել մեծատառով գրել, և գծապատկերի վրա ցույց տալ, թե ինչպես է այն նշվում :
Երեխաների ուշադրությունը պիտի հրավիրել նաև գծապատկերի վերջում դրված վերջակետի վրա և բացատրել, որ վերջում դրված երկու կետերը նշանակում են, որ միտքն ավարտված է, նախադասությունը վերջացել է: Վերջում դրված երկու կետերին անվանում ենք վերջակետ:

Նախադասությունը վերլուծելու և նրա բաղադրիչները դիտարկելու միջոցով աշակերտներին գաղափար պետք է տալ նաև բառի մասին, որպեսզի բառն ամենից առաջ ընկալվի որպես նախադասության բաղադրիչ մաս և ապա նոր՝ որպես որևէ կոնկրետ իմաստ արտահայտող առանձին լեզվական միավոր:Ընդ որում, նախաայբբենական շրջանում շահեկան է բառ հասկացությունը կապել կոնկրետ իմաստի, զգայական ընկալման հետ:Այդ նպատակով վերլուծության համար ընտրված բոլոր բառերը պետք է լինեն առարկայական: Անշուշտ, դրանք որոշակի կապի մեջ պետք է լինեն թեմատիկ նկարի կամ նկար-նախադասության բովանդակության հետ, որպեսզի երեխաների համար պարզ լինի, թե որտեղից են վերցված այդ բառերն, ինչով են դրանք առնչվում կենդանի խոսքին: Գծապատկերի շուրջ տարվող վերլուծական աշխատանքը ժամանակատար, աշխատատար գործընթաց է և ուսուցչից մեծ ջանքեր է պահանջում:Սակայն այս խնդրի լուծումն ապահովում է գրաճանաչության գործընթացի՝ սովորողի համար պարզ և իհարկե արդյունավետ իրականացումը:

Նախաայբբենական շրջանում բառի մասին հասկացություն տալուց հետո գաղափար պետք է տալ նաև վանկի՝բառի արտասանական միավորների կամ մասերի վերաբերյալ: Այս կապակցությամբ էլ երեխաները կծանոթանան միավանկ բառ և բազմավանկ բառ հասկացություններին:

Վանկի մասին տրվելիք հասկացությունը մատչելի դարձնելու համար Ա. Բահաթրյանն օգտագործել է վանկային կորերը, որոնք այսօր հաջողությամբ գործադրվում են: Դրան զուգընթաց օգտագործվում են նաև նախադասության, բառի ու վանկի գծային մոդելները, որոնք նախաայբբենական փուլում օգնում են այդ հասկացությունների յուրացմանը, երբ բառի գրաֆիկական ձևը դեռևս չկա և կորերը պետք է օգտագործվեն մոդելների հետ, և մոդելն է բառի վանկային կառուցվածքի և նախադասության բառային կազմի հիմնական նյութականացնողը:

Վանկի մասին գաղափար տալուց հետո անցում է կատարվում հնչյունին, որպեսզի հետագայում բոլոր վերլուծությունները մինչև լեզվական տարրական մասնիկների տարբերակումը հասցնելու հնարավորություն ստեղծվի, և հող նախապատրաստվի գրաճանաչության ուսուցման համար: Սկզբում գաղափար է տրվում վանկի, ապա նաև բառի մեջ եղած հնչյունների մասին, իսկ ավելի ուշ երեխաներին պետք է սովորեցնել տարբերակել հնչյուններն ըստ արտասանության

երկարության կամ ժամանակի, ըստ ձայնի և աղմուկի հարաբերության կամ՝ ըստ ձայնավոր և բաղաձայն հնչյունների: Ընդ որում, երեխաները պետք է կարողանան տարբերել երկար արտասանվող և շատ ձայն ունեցող ձայնավոր և կարճ արտասանվող ու քիչ ձայն ունեցող բաղաձայն հնչյունները, դրանք արտահայտել գծային մոդելների վրա՝ սկզբում միայն հնչյունների քանակը, իսկ ապա նաև տեսակը նշելով: Ամբողջ վերլուծության շղթան նախադասությունից մինչև հնչյուն տանող հաջորդականությամբ այսպիսի պատկեր կունենա գծային մոդելով արտահայտելիս.



Գրաճանաչության նախապատրաստական շրջանի կարևոր խնդիրներից է նաև գրելու նախապատրաստումը: Այդ աշխատանքներում կարևորվում են.

- մատների մանր ֆալանգների ամրացումը,
- ձեռքի դաստակի մարզումը,
- տեսողական հիշողության զարգացումը,
- գրելու ժամանակ հիգիենիայի կանոնների կարևորության գիտակցումն ու դրանց պահպանման ունակության մշակումը,
- տետրի մեջ կողմնորոշվելու կարողության մշակումը,
- ուրվագծերով տրված նկարների գունավորում՝ առանց սահմաններն անցնելու,
- ձախից աջ գրության ապահովումը,
- հայերենի հիմական տառամասնիկները գրելու կարողությունների մշակումը:

Վեց տարեկաններով համալրված առաջին դասարանցիների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված՝ բացառիկ կարևոր նշանակություն ունեն պատկերների գունավորման վարժությունները, որոնք հնարավորություն են տալիս գրիչը բռնել սովորեցնել, մատիտով աշխատել, գունավորման սահմաններն ու չափերը պահել, գույները տարբերել, երեխաների մեջ գունազգացողություն զարգացնել: Ընդ որում, նկարելու, ներկելու ժամանակ

աշխատանք պետք է տանել, որ սովորողները ոչ միայն կարողանան լսել ուսուցչի բացատրություններն ու հրահանգները, այլև կատարեն դրանք: Անհրաժեշտ է նաև սովորողների մոտ մշակել նկարելուց, ներկելուց առաջ անելիքը ծրագրավորելու և այդ մասին պատմելու, խոսելու ունակություններ:

Նախաայբբենական շրջանի հիմնական խնդիրը համարվում է հնչյունային լսողության զարգացումը՝ որպես հետագա գրաճանաչության գործընթացի արդյունավետության ապահովման գլխավոր պայման:

Կարդալու նախապատրաստումը ևս կարևոր աշխատանքներից է: Կարդալու մտավոր գործողությանը երեխաներին պետք է վարժեցնել դեռևս նախաայբբենական շրջանում՝ հիմք ունենալով բառերի գծային մոդելներն ու վանկային կորերը: Այդ աշխատանքը կարելի է տանել հնչյունային տարբեր կառուցվածք ունեցող միավանկ ու տարբեր վանկային կառուցվածք ունեցող բառերի գծային մոդելների վրա վերլուծական ու համադրական աշխատանք կատարելով, որը պետք է կազմի նախաայբբենական շրջանում տարվող լեզվական աշխատանքի հիմնական բովանդակությունը:

Այսպես՝ առաջադրված բառերի գծապատկերները կազմելը կամ պատրաստի մոդելներին համապատասխանող բառեր գտնելը, դրանց հնչյունային ու վանկային կառուցվածքը գիտակցելը, այդ բառերն ըստ առաջադրված մոդելի կարդալը երեխաների մեջ մշակում է բառերի վանկային սահմանագիծն զգալու և ըստ այդմ բառը վանկերով կամ ամբողջական ձևով կարդալու կարողություն: Այս կարողությունը հետագայում մշակվում ու կատարելագործվում է տառային հիմքով կատարվող վարժությունների ընթացքում, սակայն կարդալու սկզբնական կարողության ձևավորման հիմքը դրվում է նախաայբբենական փուլում: Այժմ գործածության մեջ գտնվող երկու «Այբբենարան»-ներում էլ նախաայբբենական փուլում դասերի մեծ մասը տրված է թեմատիկ նկարով և մի քանի առարկայական նկարներով, որոնք կապված են թեմատիկ նկարի հետ, նրա բաղադրիչն են կազմում և լրացնում ու ամբողջացնում են էջում ներկայացված պատմությունը: Երբեմն էլ թեմատիկ նկարի հետ տրվում են նաև նկար-պատմության հերոսները կամ առարկաներ այդ թեմաների նկարներից՝ գործողության մեջ: Ամբողջի այսպիսի բաժանումը կամ մասնատումը նպաստում է ամբողջը ավելի լավ,

ճիշտ հասկանալուն, հնարավորություն է ստեղծում լեզվական ու տրամաբանական աշխատանքն ավելի մատչելի դարձնելուն, որովհետև բաղադրիչների օգնությամբ հեշտանում է ամբողջի ընկալումը: Թեմատիկ նկարը կամ նկար-պատմությունը, պատմությունից այն բաղադրողնկար-նախադասությունների բաժանումը, այնուհետև դրանցից նկարբառերի անջատումը մեծապես նպաստում են երեխաների մեջ վերլուծական կարողությունների մշակմանը, ինչպես նաև մասերի և ամբողջի փոխհարաբերությունների ճիշտ ըմբռնմանը: Իսկ դրանց համեմատումն ու հակադրումը հնարավորություն կտան մասից գնալու դեպի ամբողջը և երեխաներին կսովորեցնեն պարզ համադրում կատարել: Այս կարողության մշակումը էական նշանակություն ունի նաև կարդալու և գրելու ուսուցման համար:Անշուշտ, նախաայբբենական շրջանի յուրաքանչյուր էջ ունի իր յուրահատուկ կառուցվածքը, բովանդակությունը, իր նպատակներն ու խնդիրները և դրանցով պայմանավորված աշխատանքի ձևերն ու մեթոդական հնարները: Սակայն այդ տարաբնույթ էջերի միջև կան աշխատանքի մեթոդների ու ձևերի ընդհանրություններ, որոնք ուսուցիչը պետք է լավ իմանա՝ էջերի ուսուցողական հնարավորությունն առավելագույնս օգտագործելու համար:Այսպիսով, նպատակ ունենալով հարստացնել վեցամյա դպրոցականի կապակցված խոսքն ու բառապաշարը նախաայբբենական փուլում,դասագրքի յուրաքանչյուր էջի ուսուցումը պետք է իրականացնել հետևյալ հաջորդականությամբ.

1. Յուրաքանչյուր էջի ուսումնասիրությունը պետք է սկսել դիտումով, որը կարելի է իրականացնել դասագրքի վրա կամ, եթե հնարավոր է, դասագրքի էջի մեծադիր պաստառի վրա: Մի քանի րոպե տևող դիտումից հետո երեխաները վերարտադրում են նկարի բովանդակությունը, դրա շուրջ դատողություններ անում:

2. Նկարի բովանդակության վերարտադրումից հետո պետք է աշակերտների ուշադրությունը հրավիրել ճանաչողական արժեք ունեցող հարցերի վրա. յուրաքանչյուր էջ անպայմանորեն նոր գիտելիքներ ու տեղեկություններ է պարունակում շրջապատող աշխարհի վերաբերյալ:

3. Նկարի վրա տարվող աշխատանքի երրորդ փուլը վերաբերում է լեզվական նյութի ուսումնասիրությանը, նրա ճանաչմանն ու ըմբռնմանը: Լեզվական երևույթի դիտումը, ճանաչումն ու բնութագրումը կատարվում են ուսուցչի անմիջական հսկողությամբ, ուղեկցվող լեզվական առաջադրանքներով և հուշող հարցադրումներով: Լեզվական աշխատանքը պետք է ուղեկցվի վերլուծություններով ու համադրություններով, բանավոր կամ գծապատկերներով արտահայտվող վարժություններով,ինչը շատ կարևոր է լեզվական վերացական հասկացությունները զննական դարձնելու և սովորածը մտապահելու համար: Թեմատիկ նկարների հետ տրվող առարկայական նկարները և դրանց լրիվ ու անավարտ գծապատկերները առատ նյութ են տալիս ամեն կարգի վերլուծական ու համադրական աշխատանքի համար, որոնք կարելի է իրականացնել ամենատարբեր բնույթի դիդակտիկ խաղերի ձևով:

4. Էջի վրա աշխատանքն ավարտվում է գրելու ուսուցման վարժություններով, որոնց օրինակները տրված են աշխատանքային տետրում, որտեղ առաջադրվում են գունավորելու, մանրագծելու և նրբագծելու բազմաբնույթ աշխատանքներ: Դրանց օգնությամբ վարժեցվում է ձեռքի մանր մկանային համակարգը, և երեխայի մեջ մշակվում է գրելու ալգորիթմը: Այս ընթացքում երեխաները սովորում են այն տառամասնիկները, որոնք ընկած են բոլոր, հատկապես 1-ին փուլում անցնելիք տառերի հիմքում:Ընդ որում, յուրաքանչյուր առաջադրանքից առաջ ուսուցիչը նախ՝ բացատրում է, թե աշակերտներն ինչ պետք է կատարեն և ինչ հաջորդականությամբ, ապա՝ բանավոր բացատրություն պահանջում երեխաներից՝ համոզված լինելու համար, որ նրանք պատկերացնում են իրենց անելիքը: Իսկ բուն աշխատանքի ժամանակ ուսուցիչը հսկում և հետևում է, որ աշակերտները ճիշտ նստեն, տետրը ճիշտ դնեն սեղանին, գրիչը ճիշտ բռնեն:

Հետազոտական աշխատանքի վերջնարդյունքի ներկայացում

Հետազոտության օբյեկտ դիտարկելով վեց տարեկաններով համալրված առաջին դասարանի նախաայբբենական շրջանը՝ ստորև ներկայացնում ենք

նախաայբբենական փուլում իրականացվող դասի մի օրինակ՝ նպատակ ունենալով ամրակայել աշակերտների՝ բառի հնչյունային վերլուծության իմացությունը, կրկնել պատմություն-նախադասություն-բառ-հնչյուն լեզվական նախագիտելիքները, ինչպես նաև զարգացնել պատմելու կարողությունն ու հարստացնել բառապաշարը:

«Այբբենարան» (Վ. Ա. Սարգսյան) դասագրքի 38-րդ էջը նվիրված է ծովին և ջրային կենդանիներին: Այդ կենդանիներին ճանաչելը պետք է գալու նաև հետագա դասերին: Իհարկե, երեխաների խոսքի զարգացման համար անգնահատելի է ներկայացված նկար-պատմությունը՝«Սևան»: Նկարում պատկերված է Սևանա լճի մի լողափ:Հեռվում երևում է Սևանի թերակղզին, երկնքում սպիտակ ամպեր են, թևածում են որորները:Ծովում կան առագաստանավեր և նավակներ:Մարդիկ լողում են: Մի ձկնորս ձուկ է որսում: Անտառի մոտ փոքրիկ վրաններ են խփված:Լողափում հանգստացողները գնդակ են խաղում : Երեխաներից մեկը քշում է իր «գայլաձուկ» նավակը: Մի քանի երեխա օդապարուկ են թռցնում: Տղաներից մեկը նստել է փչովի գետաձիու վրա և դիտում է, թե ինչպես են Արան ու նրա ընկերը շախմատ խաղում: Լողափը մաքուր է ու կոկիկ(առիթն օգտագործելով՝ աշակերտներին պետք է բացատրել, որ բոլորը պարտավոր են մաքուր պահել իրենց շրջապատը, չթափել ու չաղտոտել շրջակայքը, բնությունը):

Նկար-պատմության պատմումից հետո կարելի է աշակերտներին առաջադրել պատմությունից առանձնացնել նախադասություններ, ապա՝ բառապաշարի հարստացման նպատակով, նախադասություններից առանձնացնել բառակապակցություններ, որոնք հետզհետե պիտի դառնան ակտիվ բառապաշարի մի մասը. Օրինակ՝ սպիտակ ամպ, մաքուր լողափ, կապույտ ծով, կանաչ անտառ, տապ օր, մաքուր ծովափ, հմուտ ձկնորս, զվարթ երեխա և այլն:

Էջի ներքևում բառ-պատկերներ են՝ գայլաձուկ, կետ, գետաձի, կարապ:Տրված են նաև այդ բառերի գծապատկերները, և ուսուցիչն, ըստ դրանց խորացնում է աշակերտների՝ բառը հնչյունային վերլուծության ենթարկելու, ձայնավոր և բաղաձայն հնչյունները տարբերելու, բառերն ըստ միավանկ և բազմավանկ բառերի տարբերակելու և վանկային կորերով գծագրելու կարողությունները:Այդ բառերն, իհարկե, սովորողների առօրյայում հազվադեպ հանդիպող, կենցաղից դուրս բառեր

են և հենց դրանով էլ համարվում են նրանց միտքը զարգացնող ու բառապաշարը հարստացնող առաջադրանքների խմբին միտված(Հավելված 1.): Այդ իսկ պատճառով, ուսուցիչն անմիջապես կարող է աշակերտներին առաջադրել նաև բառակապակցություններ ու նախադասություններ կազմել հենց այդ բառերով:

Այս նպատակով ուսուցիչը կարող է հետաքրքիր, բազմապիսի ուսուցանող քարտային աշխատանքներ պատրաստել՝ զարգացնելու ինչպես աշակերտների հնչյունային վերլուծություն կատարելու, այնպես էլ բառապաշարը զարգացնելուն ուղղված կարողություններն ու հմտությունները (Հավելված 2.):

Հետազոտական աշխատանքի ընթացքում հիմվել եմ նաև այն փաստով, որ մայրենի առարկայից սովորողների ստացած ցածր գնահատականները կամ անբավարար առաջադիմությունը հաճախ ուսուցիչներն ու ծնողները բացատրում են կա՛մ երեխայի ցրվածությամբ, անուշադրությամբ, կա՛մ ուսման նկատմամբ անբարեխիղճ, անտարբեր վերաբերմունքով: Եվ հաճախ ,ցավով պետք է նշել, որ սխալվում են, որի արդյունքում սովորողները ժամանակին չեն ստանում անհրաժեշտ օգնություն, որն էլ հանգեցնում է կարդալու և գրելու կարողությունների անբավարար զարգացման: Վերջինս էլ իր հերթին պատճառ է դառնում ընդհանրապես ուսումնական ոչ լիարժեք գործունեության:Այսպիսով, ուսուցչի խնդիրն է՝ խորանալ աշակերտների ցածր առաջադիմության պատճառների մեջ: Սովորաբար, դպրոց ընդունվող բոլոր առողջ զարգացում ունեցող երեխաներն ունեն հնչարտաբերման կարողություններ, ակտիվ բառապաշար և քերականորեն ճիշտ կառուցված խոսք, սակայն ոչ բոլորն են կարողանում լսել և առանձնացնել իրենց արտասանած բառերի հնչյունները:Իսկ վերջին տարիներին, վաղ ուսուցման, ինչպես նաև ներառական կրթության հանգամանքներով պայմանավորված , առաջին դասարանցիների մեջ հաճախ նկատվում է հնչյունային լսողության զարգացման անբավարար մակարդակ: Այն առավել ակնհայտ է ՄԶՀ ունեցող երեխաների մոտ, որն էլ հանգեցնում է գրելու և կարդալու գործընթացում լուրջ դժվարությունների՝ դիսգրաֆիայի և դիսլեքսիայի: Կարծում ենք, երեխաների հետ տարվող լոգոպեդական համակարգված աշխատանքը (իհարկե համապատասխան եզրահանգումից հետո և ծնողի համաձայնությամբ) արդյունք կտա՝ առանց երեխային անընդհատ գրել և կարդալ տալու նպատակ հետապնդող վարժությունների մեջ «խեղդելու»: Ընդ որում, այս

կարևոր խնդրի լուծումը, հիմնականում պիտի իրականացվի դիդակտիկ խաղերի միջոցով, որոնք ամենաարդյունավետ միջոցներն են, քանզի՝

.խաղին անմիջական մասնակից լինելով՝ երեխաները սովորում են կարդալ, դասարանում ստեղծվում է աշխույժ, անկաշկանդ մթնոլորտ,

.խաղի ժամանակ ակտիվանում են երեխաների մտածողական գործունեությունը, ուշադրությունը, խոսքը, երևակայությունը,

.խաղը, բացի երեխաների հնչյունային լսողության զարգացումից, նրանց մեջ ձևավորում է սեփական գործունեությունը կազմակերպելու, ընկերների հետ համագործակցելու ունակություններ:

Այսպիսով, դիդակտիկ խաղերը (օր՝ «Բառաշղթա», «Այն ո՞վ է կանչում»,«Բնակեցրո՛ւ կենդանիներին»,«Հավաքի՛ր ծաղիկը» …) նպաստում են ոչ միայն երեխաների հնչյունային լսողության զարգացմանը, այլև ուսումնական գործընթացում վերացնում են լարվածությունը, վախը, երեխաների մեջ հաղթահարվում է սեփական ոչ լիարժեքությունն կամ թերարժեքության բարդույթը, ստեղծվում է դրական զգացմունքային տրամադրվածություն, աշխատանքից հաճույք ստանալու հոգեկան վիճակ: մեր հետազոտական աշխատանքի այն փաստերն են, որոնք վկայակոչում են, որ անպայմանորեն պետք է հաշվի առնել երեխաների մոտ առկա հնչյունային լսողության անբավարար զարգացման կարողությունները՝ նախաայբբենական փուլում իրականացվող քայլերի հաջող իրականացման և հետագայում նպատակային ու արդյունավետ ուսումնական գործընթաց պլանավորելու համար:

Եզրակացություն

Նախաայբբենական փուլը կառուցված է այնպես, որ երեխաների մեջ արթնացնի հետաքրքրասիրություն, սեր՝ գրքի և դպրոցի նկատմամբ, սովորելու ցանկություն: Առնչվելով դասագրքի բազմաբնույթ առաջադրանքներին, հաճույքով կատարելով դրանք՝ երեխաները ուժեղ կզգան իրենց, կդառնան զվարթ, շփվող, նրանց չի լքի հաջողակ լինելու զգացումը:Նախաայբբենական փուլին հատկացված 42 ժամի ընթացքում երեխաները սովորում են իրենց փոքրիկ կենսափորձը կիրառել զանազան առաջադրանքներ կատարելիս, սովորում են մրցակցել, համերաշխ լինել, պայքարել, շփվել միմյանց հետ, ճիշտ ձևակերպել իրենց մտքերը: Իհարկե, եթե այս աշխատանքները կազմակերպվեն խաղային տեխնոլոգիայով և աշակերտների անհատական առանձնահատկությունները, ինչպես նաև ներառականության սկզբունքը հաշվի առնելով, ապա կարող ենք նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու հիմնական իրականացման քայլերը համարել նպատակային, կարդալուն, գրելուն նախապատրաստող, աշակերտների հնչյունային լսողությունը զարգացնող, լեզվական տարրական գիտելիքներն ընկալող, բառապաշարը զարգացնող ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մաս:

Այսպիսով, ուսումնասիրելով թեմային համապատասխան գիտամեթոդական գրականությունը և իրականացնելով նախաայբբենական փուլի կազմակերպումը,

կարող ենք եզրակացնել, եթե առաջին դասարանի նախաայբբենական փուլում մայրենիի դասերի ուսումնասիրությունն իրականացվի գործնական վարժությունների, ուսոցողական խաղերի միջոցով, ապա դրանք կնպաստեն ինչպես աշակերտների հնչյունային լսողության զարգացմանը, այնպես էլ հետագայում կարդալու և գրելու բարեհաջող նախապատրաստմանը: Ընդ որում, եթե դրանք կազմվեն սովորողների թե՛ակտիվ, թե՛ պասիվ բառապաշարներից ընտրված բառերով, ապա կհարստանա նրանց ակտիվ բառապաշարը և խոսքը կդառնա առավել դիպուկ ու բովանդակային:

Գրականության ցանկ

1.Գյուլամիրյան Ջ.Հ. , «Զանգակ» այբբենարանի մեթոդական ուղեցույց, Եր.,« Զանգակ-97», 2003:

2.Գյուլամիրյան Ջ.Հ. , Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Եր.,« Լույս», 1998:

3.Գյուլամիրյան Ջ.Հ. , Խաղալով սովորենք, Զանգակ -97:

4.Գյուլամիրյան Ջ. Հ. , Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Զանգակ-97:

5.Նազարեթյան Ա. ,Նախաայբբենական փուլի կազմակերպումը, Եր.,«Նախաշավիղ» 2017, թիվ 3:

6.Սարգսյան Վ. Ա., «Այբբենարան», Եր., «Մանմար 2022»:

7. Սարգսյան Վ., Ա. , Այբբենարան: Ուսուցչի ձեռնարկ.-Եր., «Մանմար 2012»:

8.Տեր-Գրիգորյան Ա. Ե.,Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Եր. «Լույս» 1980:

Հավելված 1.



Հավելված 2.

.